ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 12 1977

ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆ

ԱԿՈՌՈՒ Ս. ՀԱԿՈԲԱ ՎԱՆՔԻ ՔՅՈԹՈՒԿԸ

1973 թ. Մաշտոցի անվան Մատենադարան մուտք գործած ձեռագրերի մեջ իր ինքնատիպ բնույթով առանձնանում է 10573 համարի տակ գրանցված Ակոռու Ս. Հակոբա վանքի նվիրատվությունների փոքրիկ մատյանը։ Գրչագիրը բաղկացած է 204 թերթից, նյութը թուղթ է, մեծությունը 13×10 սմ., ունի կաշեպատ տախտակե կազմ, աստառը՝ կապույտ կտավից, վիճակը բավարար, տեղ-տեղ կան խոնավության հետքեր, մասամբ՝ ցեցակեր[1]։

Ձեռագրի սկզբի 1ա—9ա էջերի մանր նոտր գրով գրված «յիշատակագրութիւն»-ից իմանում ենք, որ 1663—1671 թթ. Ս. Հակոբա վանքի հին եկեղեցու կաթուղիկեի վերանորոգումից, ստորերկրյա ջրանցքի ու ջրամբարի կառուցումից, ինչպես նաև այլ շինարարական աշխատանքներից հետո, պատրաստվել է այս փոքրիկ մատյանը, որտեղ համառոտակի նկարագրված են շինարարական աշխատանքներն ու թվարկված նյութական միջոցներ տրամադրող նվիրատուների ու մեկենասների անունները։ Այնուհետև ձեռագրի յուրաքանչյուր թերթի առաջին էջի վերին մասում խոշոր բոլորգրով գրվել է Ակոռու բնակիչների, ավելի ճիշտ համայնքի անդամ յուրաքանչյուր տան կամ ծխի անունը, նրանց կողմից, նույն այդ թվականին և հետագա տարիներին վանքին կատարված և կատարվելիք նվիրատվությունների գրանցման համար։

Վանքերին ու եկեղեցիներին կատարվող նվիրատվությունների հատուկ մատյաններ ցարդ մեզ չեն հանդիպել։ Ձեռագրաց ցուցակներում և ձեռագրագիտական ուսումնասիրություններում ևս այս կարգի գրչագրերի մասին հիշատակություններ չկան։ Սովորաբար այդպիսի արձանագրությունները փորագրվում էին եկեղեցիների որմերին և կամ գրի էին առնվում տվյալ եկեղեցական հաստատությունում գտնվող Ավետարանների, Հայսմավուրքների և ծիսական բնույթի այլ ձեռագիր մատյանների դատարկ էջերում[2]։ Ձեռագրագետ-աղբյուրագետներին հայտնի է, սակայն, այս կարգի արձանագրությունների և տնտեսական գործարքների մասին գրառումների Սանահնի վանքում պահպանված հարուստ մատյանը, որն ուսումնասիրողների կողմից վկայակոչվում է «Քեօթուկ Սանահնի վանուց» վերնագրով[3]։

---

1 *Ձեռագիրը նախապես պատկանել է իրանահայ բանասեր Հայկ Աճեմյանին, և վերոհիշյալ թվականին, այլ ձեռագրերի հետ Մատենադարանին է նվիրել հանգուցյալի այրին՝ տիկ. Հասմիկ Աճեմյանը։*

2 *Այս նյութերի աղբյուրագիտական գնահատականը տրված է Լ. Խաչիկյանի «Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածում, տե՛ս «Բանբեր Մատենադարանի» № 5, Երևան, 1960, էջ 21—42։*

3 *Մատենադարան, ձեռ. № 3031։ Ուսումնասիրողներից ոմանք «Տաթևի վանքի քյոթուկ» են անվանում, Մատենադարանի 6271 թվահամարը կրող և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն*